

ԿԱՐՕՒՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍԻ

Անդրանիկ Արայի Գյոնջյանի «Որսորդությունն ու անասնապահությունը բրոնզի և երկաթի դարաշրջանում Հայաստանի հյուսիս-արևմտյան տարածքում» թեմայով Գ.00.08 - «Կենդանաբանություն. մակաբուծաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Գիտական խորհրդի մեծարգո նախագահ, խորհրդի հարգելի անդամներ, հարգելի գործընկերներ, հարգարժան հյուրեր առաջին հերթին խորին շնորհակալությունս եմ հայտնում այս աշխատանքի քննարկմանն ինձ մասնակից դարձնելու և այս վեճամբիոնից արտահայտվելու ընձեռնած հնարավորության համար:

Այսօր մենք ականատես և ունկնդիրն ենք երկարատև ու քրտնաջան աշխատանքի արդյունքում ծնված, չափազանց հետաքրքիր, տեսական, գործնական, կիրառական ու հեռանկարային նշանակություն ունեցող, մի յուրօրինակ ատենախոսության հրապարակային պաշտպանության, որտեղ ներկայացված է Շիրակի մարզի հնագիտական հուշարձաններից հայտնաբերված հնէակենդանաբանական նյութերի խորն ու համակողմանի ուսումնասիրությունը:

Նախ պետք է նշել, որ ողջ աշխատանքի բովանդակությանը մանրակրկիտ ծանոթանալուց հետո զալիս ես այն համոզման, որ այն յուրօրինակ ուսումնասիրություն է՝ առաջադրված խնդիրների շրջանակներում ավարտուն ու ամբողջական աշխատանք, և որ ատենախոսը հաջողությամբ է լուծել իր առջև դրված խնդիրները, դրսևորել է մասնագիտական ծանրակշիռ իմացություն, տրամաբանորեն և ճշգրիտ գնահատել է բավականաչափ բարդ, աշխատատար նյութն ու ապահովել սպասվելիք արդյունքները:

Ավելացնեմ նաև, որ հանձինս Անդրանիկ Գյոնջյանի, մենք գործ ունենք կենսաբանության բնագավառի լուրջ ու պրպտող գիտնականի հետ, որը կարող է առաջարկել գիտական հետաքրքիր խնդիրներ և բարեխիղճ ու հետևողական աշխատանքի շնորհիվ հասնել դրանց լուծմանը: Համոզված եմ, որ հեղինակի հետագա գիտական գործունեության ընթացքում կենսաբանության բնագավառի շատ հարցականներ ու անճշտություններ կարող են պարզաբանվել ու շտկվել շնորհիվ իրեն հատուկ որոնող բնավորության ու անսպառ աշխատասիրության, քանզի պետք է գիտենալ, որ «Կենսաբանության» բնագավառն ինչքան հետաքրքիր ու գրավիչ, նույնքան էլ հազվագյուտ ու դժվար յուրացվող մասնագիտություն է, որի լիիրավ տիրապետմանը կարող են հասնել միայն բացառիկ ունակություններով, լավագույն հիշողությամբ, անսպառ աշխատասիրությամբ օժտված անձինք:

Աշխատանքին ծանոթանալուց հետո համոզվում ես, որ այդ բոլոր հատկանիշները, որոնք անհասանելի են շատ շատերի համար, խտացված են Գյոնջյան անձի մեջ, հատկանիշներ, որոնք էլ հանդիսացել են նրա հաջողությունների գրավականը:

Ցանկանք և հուսանք, որ Անդրանիկ Գյոնջյանն այս արժեքավոր աշխատանքը ներկայացնելուց հետո նույն եռանդով կշարունակի իր հետագա ուսումնասիրությունները՝ գերծ մնալով դեպի ճահճացում տանող ինքնասիրահարվածության և ինքնաբավարարվածության բարդություններից, իբր ամեն ինչ արդեն արել ու ներկայացրել է:

Ուսումնասիրման դասական մեթոդների կիրառմամբ, որոնք համապատասխանում են առաջադրված խնդիրներին և նպատակներին, սույն աշխատանքում ատենախոսի հետազոտության գլխավոր նպատակը եղել է իրականացնել համալիր հետազոտություն և բացահայտել որսորդության և անասնապահության դերն ու նշանակությունը բրոնզի և երկաթի դարաշրջանում՝ հյուսիս-արևմտյան Հայաստանի հնագիտական հուշարձաններից հայտնաբերված ոսկրաբանական նյութերի ուսումնասիրման հիման վրա:

Հետևապես հեղինակի կողմից կատարված բազմաբնույթ ուսումնասիրությունները և դրանցից բխող ընդհանրացումներն առանձնակի կարևոր են և ցույց են տալիս, որ այդ ուղղությամբ կատարված յուրաքանչյուր հետազոտության կարևորությունը կասկածի տեղիք չի տալիս:

Գրախոսվող սույն աշխատանքն արժեքավոր է այն տեսակետից, որ նրանում պարզաբանվում են Հայաստանի հյուսիս-արևմտյան տարածքի բրոնզի և երկաթի դարաշրջանի վայրի և ընտանի կենդանիների տեսակային կազմը, դրանց դերն ու նշանակությունը վերոնշյալ տարածքի հնագույն բնակչության կյանքում, ինչպես նաև ընտանի կենդանիների որոշ ներկայացուցիչների ձևակազմաբանական ցուցանիշները:

Հարկ է նշել, որ սույն աշխատանքը կհետաքրքրի կենսաբանության տարբեր ոլորտների գիտնականներին՝ կենդանաբաններին, էկոլոգներին, ձևակազմաբաններին, բնապահպաններին, կենսաբազմազանության խնդիրներով զբաղվող մասնագետներին: Կասկածից վեր է, որ սույն աշխատանքն օգտակար կլինի հատկապես հնագետների համար, ինչպես նաև բուհերում «Կենսաբանություն», «Կենդանաբանություն», «Ձևակազմաբանություն» և այլ առարկաներ դասավանդող դասախոսների, ասպիրանտների, մագիստրոսների և ուսանողների, համար:

Իր գիտական հետազոտությունների ընթացքում հեղինակը, հաղթահարելով բարոյահոգեբանական, սոցիալ տնտեսական դժվարությունները, կարողացել է գիտական բարձր մակարդակով ավարտին հասցնել սկսած աշխատանքը:

Համոզված եմ, որ իր աշխատանքային հետագա գործունեության ընթացքում նրա արժանիքների ճանաչողության սահմանները կընդարձակվեն՝ դուրս գալով իր ներկայիս աշխատատեղի շրջանակներից, իսկ ուսումնասիրությունների արդյունքները կներդրվեն բնագավառի հետագա տարաբնույթ ուսումնասիրություններում:

Համաձայն եմ, որ ինչպես գրեթե բոլոր աշխատանքներում, այնպես էլ այս աշխատանքում, անպայման կգտնվեն որոշակի թերություններ, վրիպումներ, թույլ ձևակերպումներ, տառասխալներ, անհասկանալի մոքեր, սակայն, որ դրանում արժեքավորը շատ է և, որ այն լուրջ ուսումնասիրություն է կենսաբանության բնագավառում, դա արդեն անվիճելի է:

Հավաստիացնում եմ, որ ներկայացվող աշխատանքն իր որակով եզակի է, բնությով՝ յուրահատուկ, այն նորություն է կենսաբանության բնագավառում, իր մեջ պարունակելով մեծ քանակությամբ փաստացի նյութ, որն անկասկած անհրաժեշտ է լինելու կիրառել «Կենսաբանություն» առարկայի հետագա ուսումնական դասընթացներում:

Այսօր ինձ համար և հետաքրքիր է ու հաճելի, և թող տարօրինակ չհնչի, նաև հեշտ այս ազդեցիկ գիտական խորհրդում ներկայացնելու աշխատանքի վերաբերյալ իմ կողմից իրականացրած վերլուծության արդյունքները: Հեշտ, մանավանդ, որ մի կողմից աշխատանքի առանձին դրույթները բազմիցս քննարկվել է տարբեր ատյաններում՝ տրվելով համապատասխան դրական գնահատականներ, առաջարկություններ ու ցանկություններ, իսկ մյուս կողմից, որովհետև աշխատանքի հիմնական դրույթներն ու առաջարկությունները բավականին պարզ, հանգամանորեն ու համոզիչ ներկայացրեց ինքը՝ ատենախոսը, իսկ աշխատանքի ու վերջինիս սեղմագրի վերաբերյալ գիտական խորը վերլուծությամբ իրենց ծանրակշիռ խոսքը՝ գրախոսականի ձևով գիտական խորհուրդ են ներկայացրել առաջատար կազմակերպության հարգարժան գիտնականներն ու պաշտոնական և ոչ պաշտոնական մյուս ընդդիմախոսները:

Տեղեկացնում եմ գիտական խորհրդին, որ ինձ համար միշտ էլ հեշտ ու հաճելի է եղել նման հեղինակների ծանոթանալը և գրախոսելը, ինչպիսին այս աշխատանքն է, որի հեղինակի տերմինաբանության մաքուր ու անկաշկանդ իմացությունը, ժամանակակից տեխնիկական միջոցներին անթերի տիրապետելու կարողությունը, իր ինտելեկտուալ ունակությունների և աշխատասիրության զուգակցմամբ, նա դառնում է կարող ու ցանկալի ուժ, որի կարողությունները ոչ միայն պետք է նկատել ու բնութագրել, այլ օգտագործել կենսաբանների միացյալ աշխատանքներում:

Օգտվելով առիթից նշեմ, որ գիտության մեջ ուրք դնող մեր երիտասարդները պետք է շատ լավ իմանան, որ այդ դժվարագույնս գիտական ճանապարհի ընտրության և հաջողություն ընկալելու համար չափազանց կարևոր են բնատուր ունակությունները, բայց առավել կարևոր է աշխատասիրությունը: Բարեբախտաբար Անդրանիկ Գյոնջյանի մոտ այդ երկու հատկանիշներն էլ սերտորեն զուգակցված են, որի շնորհիվ նա կարողացել է խորացնել իր գիտելիքները՝ հաղթահարելով բոլոր հանդիպած դժվարությունները, հասնել իր նպատակին և արդյունքում, ահա այսպիսի ծանրակշիռ գիտական խորհրդում ներկայացնել իր լուրջ ու արժեքավոր աշխատանքը:

Հարգելի գործընկերներ:

Նկատի ունենալով վերը շարադրվածը՝ կարելի է վստահաբար ասել, որ Ա. Գյոնջյանի ատենախոսության թեմայի ընտրությունը, որը վերաբերում է որսորդության և անասնապահության դերին ու նշանակությանը բրոնզի և երկաթի դարաշրջանում՝ հյուսիս-արևմտյան Հայաստանի բնակչության կենցաղում, միանգամայն հիմնավորված է, աշխատանքում պլանավորված ուսումնասիրությունների և պարզաբանվելիք հիմնախնդիրների արդիականությունը՝ անկասկածելի, իսկ դրանց բացահայտման գիտական և գործնական նշանակությունը՝ ակնհայտ ու կարևոր:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է վերջին տարիներին Շիրակի մարզի հնագիտական հուշարձաններից հայտնաբերված մեծաքանակ ոսկրաբանական նյութերի համակարգված ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

Ա. Գյոնջյանի աշխատանքի արդիականությունն արժեքավոր է հատկապես նրանով, որ հեղինակն իր առաջ նպատակ է դրել հնարավորինս համակողմանի ուսումնասիրել և ներկայացնել ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հնէակենդանաբանական հավաքածուների ֆոնդում առկա Հայաստանի հյուսիս-արևմտյան տարածքի հուշարձաններից հայտնաբերված՝ ժամանակագրական առումով համարժեք նյութերի ընդհանուր վերլուծության արդյունքները, ինչը թույլ է տալիս պատկերացում կազմել տվյալ տարածաշրջանի անցյալի ֆաունայի բազմազանության, որսորդության, անասնապահության, ինչպես նաև հնագույն բնակչության կողմից բուծված ընտանի կենդանիների ֆիզիկական կառուցվածքի մասին:

Դրված նպատակին հասնելու համար հեղինակն իր կողմից առաջին անգամ կատարած ուսումնասիրությունների հիման վրա բերում է համոզիչ տեղեկատվություններ, իր առջև դնելով հետևյալ հիմնական խնդիրների իրականացումը.

1. Բացահայտել կաթնասունների տեսակային կազմն ըստ Հայաստանի հյուսիս-արևմտյան հատվածի բրոնզի և երկաթի դարաշրջանի հնագիտական հուշարձաններից հայտնաբերված ֆաունիստիկ մնացորդների:
2. Սահմանել վերոնշյալ տարածաշրջանում և ժամանակահատվածում որսորդությունն ու անասնապահությունը բնութագրող վայրի և ընտանի կենդանատեսակների տոկոսային հարաբերակցությունը:
3. Վերհանել ուսումնասիրվող ֆաունայի առանձին ներկայացուցիչների ոսկրաչափական ցուցանիշները:
4. Իրականացնել համեմատական վերլուծություն Հայաստանի՝ ժամանակագրորեն համընկնող այլ հուշարձաններից հայտնաբերված համարժեք նյութերի հետ:

Ուսումնասիրությունների օբյեկտ են հանդիսացել Հայաստանի հյուսիս-արևմտյան հատվածի բրոնզի և երկաթի դարաշրջանի հնագիտական հուշարձաններից հայտնաբերված ավելի քան 4000 ֆաունիստիկ ոսկրային մնացորդները:

Յուրաքանչյուր հարցի ուսումնասիրության ժամանակ օգտագործվել են ընդունված համապատասխան դասական, տարբեր մեթոդներ, որոնց արդյունքում ստացված տվյալների հիման վրա բացահայտվել է որսորդության և անասնապահության դերն ու նշանակությունը բրոնզի և երկաթի դարաշրջանում՝ հյուսիս-արևմտյան Հայաստանի բնակչության կյանքում:

Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ՝

1. Որոշվել և համակարգվել են 2005 - 2017 թվականների ընթացքում ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հնէակենդանաբանական հավաքածուների ֆոնդում հավաքված՝ Մեծ

Մեպասար, Հայկաձոր, Ագատան, Շիրակավան, Ջրափի, Գյումրի, Մայիսյան և Լոռի բերդ հնագիտական հուշարձանների պեղումներից հայտնաբերված ոսկրաբանական նյութերը:

2. Մահմանվել են բրոնզի և երկաթի դարերում հյուսիս-արևմտյան Հայաստանի բնակչության տնտեսական գործունեությունը բնութագրող վայրի և ընտանի կենդանիների տեսակային կազմը և դրանց տոկոսային հարաբերակցությունը:
3. Որոշվել են ընտանի կենդանիների (ցուլեր, այծեր, ոչխարներ, ձիեր, խոզեր) ձևակազմաչափական ցուցանիշները և դրանցից որոշների փոփոխությունը ժամանակի ընթացքում:
4. Իրականացվել է Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջանի հնագիտական հուշարձաններից հայտնաբերված հնակենդանաբանական նյութերի քանակական ու որակական տվյալների համեմատական վերլուծություն և արդյունքների ընդհանրացում:

Որպես կենսաբանի, ինձ համար աշխատանքի կարևորագույն արժանիքներից է նաև այն, որ ատենախոսության մեջ հեղինակը պահանջվող մակարդակով, տարբեր մեթոդների կիրառմամբ մանրակրկիտ վերլուծության է ենթարկել և շարադրել է տեղեկություն ձևակազմաբանությանը վերաբերող որոշ հարցեր:

Աշխատանքի տեսական նշանակությունը: Որոշվում է կենսաբազմազանության համապարփակ ուսումնասիրության և ողնաշարավորների էվոլյուցիայի իմացության համատեքստում: Ուսումնասիրության ընթացքում ստացված արդյունքները կիրառելի են հնաաշխարհագրական իրավիճակի վերականգնման, ներկայիս տերիտորիայի վերաբերյալ փոփոխությունները կանխատեսելու, ինչպես նաև հանրապետության ժամանակակից կենդանական աշխարհի զարգացման առանձին փուլերի ավելի խորը իմացության համար:

Հյուսիս-արևմտյան Հայաստանի 9 հնագիտական հուշարձաններից հայտնաբերված հնակենդանաբանական նյութերը ներառվել են ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հնակենդանաբանական հավաքածուների ֆոնդում, ինչպես նաև էլեկտրոնային տեղեկատվական բազայում, որը հետագայում թույլ կտա բոլոր շահագրգիռ մասնագետներին լայնորեն օգտագործել այդ տվյալները:

Եզրակացությունները, բացի նեղ մասնագիտական նշանակության, կարող են օգտակար լինել մորֆոլոգիայի, անատոմիայի, տաքսոնոմիայի, վայրի և ընտանի կենդանիների ձևակազմաբանական հարցերով զբաղվող կենսաբաններին, հնագետներին, ազգագրագետներին և պատմաբաններին, ովքեր ուսումնասիրում են հնագույն բնակչության կենցաղը, տնտեսությունը և մշակույթը:

Բրածո նմուշները կարող են օգտագործվել որպես ցուցանմուշներ հնագիտական և կենդանաբանական թանգարաններում:

Աշխատանքին վերաբերող նյութերը գեկուցվել և քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում, ԱՄՆ-ում, Իսպանիայում և Թուրքիայում կազմակերպված միջազգային գիտաժողովներում:

Աշխատանքը, որպես թեկնածուական ատենախոսություն, ամբողջությամբ քննարկվել և տպագրության է երնաշխարհվել ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ:

Հետազոտությունների հիմնական արդյունքները հրատարակված են 8 գիտական հոդվածներում, որոնք լիովին արտացոլում են աշխատանքի բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 5 գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածից: Այն շարադրված է համակարգչային շարվածքով և կազմված է 117 էջից, պարունակում է 106 աղյուսակ, 9 լուսանկար: Օգտագործված գրականության ցանկը ներառում է 107 հայրենական և արտասահմանյան անվանում:

Ատենախոսության I գլխում ամփոփված է Հայաստանի հյուսիս-արևմտյան հատվածի չորրորդական ժամանակաշրջանի տերիոֆաունայի ուսումնասիրման պատմությունը:

Ատենախոսության II գլխում, որտեղ շարադրված են ուսումնասիրության նյութն ու աշխատանքային մեթոդները, քննարկվում են նյութերի ծագումը, դրանց ձևակազմաբանական և ձևաչափական հետազոտման եղանակները:

Աշխատանքի III գլուխը սկսվում է հեղինակի սեփական դիտարկումներով, որտեղ առանձին ակնարկների և աղյուսակների տեսքով ներկայացված են յուրաքանչյուր հնագիտական հուշարձանից հայտնաբերված ոսկրաբանական նյութերի քանակական և որակական տվյալները:

IV գլխում առանձին կերպով ներկայացված են 10 վայրի և 6 ընտանի կենդանատեսակներից յուրաքանչյուրին պատկանող ոսկրային մնացորդների, ինչպես քանակական, այնպես էլ ոսկրաչափական ուսումնասիրման արդյունքները:

Գլուխ V-ում ներկայացված են Հայաստանի հյուսիս-արևմտյան տարածքի բրոնզ-երկաթի դարաշրջանին թվագրվող հնագիտական բոլոր հուշարձաններից ստացված նյութերի ընդհանուր վերլուծության արդյունքները:

Քննարկվող աշխատանքը զերծ է սկզբունքային թերություններից, այնուամենայնիվ, նշենք որոշակի դիտողություններ և ցանկություններ:

1. Ատենախոսության 7-րդ էջում ցանկալի կլիներ նշել որոշ կաթնասունների լատիներեն անվանումները:
2. Անհասկանալի է թե ինչու է որոշ տեղերում <<բրոնզի դարը>> գրվում մեծատառով, իսկ որոշներում՝ ոչ:
3. Մեղմագրի աղյուսակ 1-ում տարանջատված չեն միասնաբանվածներին և երկամբանակներին վերաբերող սյունակները:
4. Կան համակարգչային որոշ վրիպումներ և տառասխալներ, որոնք հեշտությամբ կարելի է ուղղել, մանավանդ, որ դրանք աշխատանքի մանրակրկիթ ընթերցման ժամանակ նշվել են համապատասխան էջերում:
5. Ինձ թվում է, որ թեմայի բովանդակությունը առավել նպատակահարմար կլիներ ներկայացնել հայերեն լեզվով, քանզի այն առավել հետաքրքիր կլինի հայ գիտնականների համար:

Աշխատանքի վերաբերյալ նշված վրիպումներն էական նշանակություն չունեն և ոչ մի ազդեցություն չեն կարող թողնել աշխատանքի արժանիքների վրա, իսկ ցանկությունները վերաբերում են հեռագա շարունակվելիք աշխատանքներին:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքի մանրամասն ուսումնասիրությունից գալիս ենք այն համոզման, որ.

1. Անդրանիկ Արայի Գյոնջյանի ատենախոսության մեջ պլանավորված ուսումնասիրություններն ու ստացված արդյունքները համազիչ ձևով վկայում են իրենց արդիականությունը և, հետևապես, ունեն ինչպես տեսական ու գործնական, այնպես էլ կիրառական կարևոր նշանակություն:
2. Ատենախոսը հաջողությամբ է լուծել իր առջև դրված խնդիրները, դրսևորել է իր բնագավառի խորն ու ծանրակշիռ իմացություն, կարողացել է տրամաբանորեն և ճշգրիտ գնահատել բավականաչափ բարդ ու աշխատատար նյութն ու ստացված արդյունքները:
3. Կատարված բոլոր եզրակացությունները բխում են ուսումնասիրությունների արդյունքներից, հիմնավորված են համոզիչ փաստերով ու մեկնաբանություններով, որոնք չափազանց կարևոր են գիտության անաղարտությունը պահպանելու տեսակետից:

Ես՝ որպես պաշտոնական ընդդիմախոս, միանալով աշխատանքի շուրջը ելույթ ունեցողների կարծիքներին, ողջունում եմ ատենախոսի համբերությունը, աշխատասիրությունը, ամենայն պատասխանատվությամբ երաշխավորելով Ձեր քննարկմանն ու գնահատմանը ներկայացված սույն աշխատանքի գիտական բարձր արժեքը, նրա հիմնական դրույթների և առաջարկությունների հետագա կիրառման հնարավորությունն ու անհրաժեշտությունը տեսական ու գործնական կենսաբանության և առանձնապես կենդանաբանության բնագավառում, գտնում, որ այն միանշանակ արժանի է դրական գնահատականի ու հավելում, որ թերևս սխալված չեք լինի, եթե Ա. Գյոնջյանին շնորհեք կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, որին նա լիովին արժանի է:

Անդրանիկ Արայի Գյոնջյանի « Որսորդությունն ու անասնապահությունը բրոնզի և երկաթի դարաշրջանում Հայաստանի հյուսիս-արևմտյան տարածքում » թեմայով՝ կենսաբանական գիտությունների թեկնածուի հայցման ներկայացված ատենախոսությունն ավարտուն գիտական հետազոտություն է: Այն իր գիտական արժեքով, արդիականությամբ, ստացված տվյալների նորությամբ, տեսական ու գործնական նշանակությամբ կարևոր ներդրում է կենսաբանական ուսումնասիրությունների շարքում:

Սեղմնագիրն իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է ներկայացվող ատենախոսությանը:

Գտնում եմ, որ Անդրանիկ Գյունջյանի կողմից պաշտպանության ներկայացվող թեկնածուական թեզը համարվում է իր կողմից կատարված ինքնուրույն, ամփոփ գիտական աշխատանք:

Հաշվի առնելով ատենախոսության 106 աղյուսակների, 9 նկարների և հրատարակված 8 գիտական հոդվածների տվյալների համապատասխանությունն ատենախոսությանը, գրառումների կարգը և ատենախոսությունում դրանց օգտագործվածությունը, գտնում եմ.

* ատենախոսությունում ներկայացված նյութերը համապատասխանում են կատարված հետազոտություններին,

* թեմայի շրջանակներում հեղինակի կողմից տարբեր մասնագիտական հանդեակներում հրատարակված անհրաժեշտ քանակից էլ ավելի (8) գիտական հոդվածներում բավարար չափով լուսաբանված և ամբողջությամբ արտացոլված են հեղինակի կատարած և ատենախոսությունում նշված հետազոտությունների հիմնական արդյունքները,

* ատենախոսության մեջ վերլուծված նյութերը բխում են հետազոտությունների արդյունքում ստացված տվյալներից և հավաստի են,

* հեղինակը հիմնականում կատարել է իր կողմից նախանշված ուսումնասիրությունների նպատակը և խնդիրները,

* կատարված գիտական հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա հեղինակի կողմից ատենախոսության մեջ ներկայացված են 9 եզրահանգումներ, որոնք արտացոլում են ատենախոսության էությունը,

* ատենախոսությունը համապատասխանում է Գ.00.08 «Կենդանաբանություն, մակարուծաբանություն, էկոլոգիա» մասնագիտությանը:

Վերոհիշյալը թույլ է տալիս գալ եզրահանգման, որ Ա. Գյունջյանի «Որսորդությունն ու անասնապահությունը բրոնզի և երկաթի դարաշրջանում Հայաստանի հյուսիս-արևմտյան տարածքում» թեմայով կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացվող ատենախոսությունը ավարտուն, ինքնուրույն, կենսաբանական գիտությունների բնագավառում հնակենդանաբանությանը վերաբերող մի քանի կարևոր խնդիրների լուծմանը նպատակադրված և հաջողությամբ իրականացված արժեքավոր հիմնարար գիտական հետազոտություն է, որի նյութերն ու ձևակերպումները հավաստի են, իսկ ստացված արդյունքներն ունեն ինչպես տեսական ու գործնական, այնպես էլ կիրառական կարևոր նշանակություն:

Ատենախոսությունն իր ուսումնասիրվող խնդիրների արդիականությամբ և բովանդակությամբ լիովին համապատասխանում են թեկնածուական ատենախոսության ՀՀ ԲՈԿ-ի կողմից սահմանված և ներկայացվող պահանջներին հետևապես այն երաշխավորվում է ներկայացնել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնում գործող Կենդանաբանություն-036 մասնագիտական խորհուրդ՝ հրապարակային պաշտպանության, քանի որ այն համապատասխանում է խորհրդի

մասնագիտությանը և ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետին՝ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով, իսկ դրա հեղինակը՝ Անդրանիկ Գյոնջյանը արժանի է կենսաբանական գիտությունների թեկնածուի հայցվող գիտական աստիճանին:

ՀԱԱՀ-ի Մորֆոլոգիայի, ֆիզիոլոգիայի և
սխտաբանական անատոմիայի ամբիոնի
պրոֆեսոր, կենս. գիտ. դոկտոր՝



Ռ.Ս. Մխիթարյան

Կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռ.Ս.Մխիթարյանի
ստորագրությունը հաստատում եմ
ՀԱԱՀ-ի գիտ. քարտուղար,
գյուղ. գիտ. թեկնածու, դոցենտ՝



Գ.Վ. Ավագյան

03.11.2022թ.

